

Բիզնես նախագծերի ընդունման և գնահատման չափորոշիչներ

Նախագծերի ընդունման չափորոշիչները և պարտադիր պայմանները

1. Պատշաճ բիզնես-պլանի առկայություն, որը պետք է պարունակի՝

- դիմող կազմակերպության (անձի) և ծրագրի մասին մանրամասն տեղեկություններ,
- ֆինանսական ռեսուրսների նկատմամբ պահանջարկի, ծրագրային ֆինանսավորման, շահութաբերության, առկա և սպասված ֆինանսական հոսքերի, համաֆինանսավորման առկայության, վարկային պատմության, ակնկալվող աջակցության հետգնման և կազմակերպության ներկայիս արժեքի մասին տեղեկություններ,
- անձնակազմի մասնագիտացվածության, առկա և սպասվող աշխատատեղերի, առկա միջին աշխատավարձի և սպասվող աշխատավարձերի մասին տեղեկություններ,
- արտադրական տեխնոլոգիաների, հնարավոր նորարարական տեխնոլոգիաների, հումքի մատակարարման, այլ կազմակերպությունների հետ համագործակցության և ծրագրի՝ տեխնիկապես իրականացվելիության մասին տեղեկություններ,
- իրացման կազմակերպման, առկա և կանխատեսվող իրացման ծավալների, մարքեթինգային քաղաքականության, արտաքին և ներքին շուկաների ծավալների, մրցակցային առավելությունների, գործընկերների և իրացման պոտենցիալի մասին տեղեկություններ,
- վճարված հարկերի, պարտադիր վճարների, գերավճարների և պարտքային պարտավորությունների մասին տեղեկություններ,
- առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների հետ համագործակցության մասին տեղեկություններ,
- ծրագրին վերաբերող այլ յուրահատուկ, անհրաժեշտ տեղեկություններ:

2. Նախագծով առաջարկվող գործունեությունը պետք է՝

- նպաստի նոր աշխատատեղերի ստեղծմանը,
- նպաստի արտադրության ընդլայնմանը,
- խթանի արտահանումը և (կամ) փոխարինի ներմուծումը,
- նպաստի կոոպերացիայի սկզբունքով այլ ձեռնարկությունների և տնային տնտեսությունների հետ համագործակցությանը,
- նպաստի լոկալ տարածաշրջանի զարգացմանը,
- ունենա տեղական հումքի և ռեսուրսների կիրառման ուղղվածություն,
- ունենա նորարարության ուղղվածություն,
- լինի անվտանգ՝ շրջակա միջավայրի համար:

3. Աջակցության ծրագրին չեն կարող մասնակցել՝

- սկսնակ գործարարները,
- նախկինում գործունեություն չծավալած կազմակերպությունները,
- շինարարության և սպասարկման ոլորտներին վերաբերող նախագծերը,
- առանց հստակ ներկայացված և հիմնավորված գործողությունների ծրագրի նախագծերը,
- տնտեսության առողջ մթնոլորտը խաթարող նախագծերը,
- վտանգավոր գործունեություն ներառող նախագծերը:

4. Նախագիծը պետք է լինի համակարգչով կազմված, և պետք է նաև ներկայացվի դրա էլեկտրոնային տարբերակը:

5. Նախագիծ ներկայացնող կազմակերպությունն աջակցության դեպքում պետք է պարտադիր ներդնի կորպորատիվ կառավարման համակարգ և ներկայացնի գործունեության մասին հաշվետվություն՝ ամսական կտրվածքով:

Նախագծերի գնահատման առավել կարևոր գործոնները

1. Իրատեսականություն,
2. Նոր աշխատատեղերի ստեղծում,
3. Արտահանմանը միտվածություն, ներմուծման փոխարինում,
4. Համաֆինանսավորման առկայություն,
5. Իրացման շուկաների հիմնավոր վերլուծությունը ներկայացնելը՝ համաշխարհային տնտեսական ճգնաժամի պայմաններում,
6. Հստակ մշակված որակյալ ծրագրի առկայություն,
7. Նախագծով ներկայացված տեղեկությունների ճշգրտություն,
8. Նորարարություն,
9. Մուլտիպլիկատիվ ազդեցության առկայություն և տնտեսության զարգացմանը նպաստելը,
10. Կադրային պոտենցիալի առկայություն,
11. Ֆինանսական ցուցանիշների գրավչություն,
12. Ռիսկայնության ցածր մակարդակ:

Անհրաժեշտության դեպքում ավելի մանրամասն ուսումնասիրության կամ առաջնայնության որոշման համար կիրառվող չափորոշիչներ

1. Միավորներով գնահատվող չափորոշիչներ՝ առաջնայնության որոշման համար (ընդհանուր՝ 50 միավոր)՝

- իրատեսակայնություն և հեռանկարայնություն (5),
- ռիսկայնության աստիճան (3),
- կազմակերպության գործունեության հաջողված պատմություն (2),
- տնտեսության վրա մուլտիպլիկատիվ ազդեցություն (5),
- արտահանման խթանում և (կամ) ներմուծման փոխարինում (7),
- անձնակազմի մասնագիտական որակավորում (2),
- զբաղվածության ընդլայնում (7),
- նորարարություն և մրցակցային առավելություն (3),
- պատշաճ մարքեթինգային քաղաքականություն (7),
- բարեխիղճ վարկային պատմություն և պարտքային պարտավորությունների պարտաճանաչ կատարում (5),
- համաֆինանսավորման առկայություն (սեփականատիրոջ մասնակցությունը նախագծին՝ 50 և ավելի տոկոսով) (4):

2. Վերլուծությունների հիման վրա ստացվող համեմատական չափորոշիչներ՝

- ծախս-օգուտ վերլուծության հիման վրա հետզնման ժամկետի որոշում,
- ներդրումների շահութաբերության դասիչ,
- ներքին շահութաբերության նորմ,
- զուտ ներկա արժեք,
- ներդրումների արդյունավետության ցուցանիշ,
- յուրաքանչյուր ներդրված 1 մլն դրամի բերած օգուտների (շահույթ, նոր աշխատատեղ, արտահանում, վճարվող հարկեր և այլն) վերլուծություն,
- առկա ցուցանիշների համեմատություն՝ լոկալ մակարդակով, ընդհանուր ցուցանիշների հետ (ընկերության իրացման մասնաբաժինը ճյուղի գործող կազմակերպությունների համախառն արտադրանքի իրացման գործում, ընկերության աշխատողների թվի մասնաբաժինը տարածաշրջանում առկա բոլոր աշխատողների թվի մեջ և այլն):

Վերոնշյալ չափանիշներին համապատասխանող բիզնես նախագծերը կարող եք ուղարկել կամ ներկայացնել առձեռն ՀՀ կառավարության ընդունարան: Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0010, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 1, հեռ.՝ (+ 374 10) 52-92-39: